ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ
ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդական,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԱՆԳԼՈՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խմբային հայցը մի քանի անձանց կամ անձանց անորոշ շրջանակի իրավունքների պաշտպանության բավական լայն կիրառություն ունեցող ինստիտուտներից է: Այն հնարավորություն է ընձեռում խմբի անդամներից մեկին կամ մի քանիսին հայց ներկայացնել՝ ներկայացնելով խմբի մյուս անդամների շահերը, առանց համապատասխան գործի դատական քննությանը նրանց մասնակցության[1]: Խմբային հայցի հիմնական նախապայմանը շահերի ընդհանրությունն է[2]: Թեև ներկայումս «խմբային հայց» հասկացության սահմանման հարցում մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, ընդունելի է այն մոտեցումը, որի համաձայն եթե տվյալ գործով մի խումբ անձինք ունեն միևնույն շահը, ապա քննությունը կարող է սկսվել և, դատարանի կողմից այլ բան չնախատեսելու դեպքում, շարունակվել խմբի անդամների թվից մեկ կամ մեկից ավել անձանցով կամ ընդդեմ մեկ կամ մեկից ավել անձանց, որոնք գործում են որպես ամբողջ խմբի կամ խմբի՝ առանց դրա մեկ կամ մի քանի անդամների, լիազորված անձինք[3]: Խմբային հայցը հարկ է դիտարկել որպես դատավարական ինստիտուտ, որը թույլ է տալիս մեկ կամ մի քանի անձանց խմբի կամ անձանց անորոշ շրջա-

նակի իրավունքների պաշտպանության հայց ներկայացնել:

Խմբային հայցերի դասակարգումների հիմքում ընկած են մի շարք չափանիշներ: Այդ կապակցությամբ, հաշվի առնելով հայց ներկայացնող սուբյեկտներին, առանձնացվում են մասնավոր, հանրային և կազմակերպական խմբային հայցերը: Մասնավոր-իրավական խմբային հայցի ինստիտուտը ծնունդ է առել և առավել լայն տարածում ստացել ընդհանուր իրավունքի պետություններում: Այն բնորոշ է արդարադատության անգլոսաքսոնական համակարգին: Ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն՝ խմբային հայցն անձանց անորոշ շրջանակի իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ միջոց է ընդհանուր իրավունքի պետություններում[4]: Այս կապակցությամբ, համառոտ անդրադառնանք ԱՄՆ-ում գործող իրավակարգավորումներին: ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոններին համապատասխան՝ խմբի մեկ կամ մի քանի անդամներ կարող են հայց ներկայացնել կամ ըստ հայցի հանդես գալ պատասխանողի դերում՝ որպես ամբողջ խմբի ներկայացուցիչներ այն դեպքերում, եթե խումբն այնքան բազմամարդ է, որ դրա բոլոր անդամների մասնակցությունը գործի քննությանը բարդություն է ներկայացնում, իրավունքի և փաստերի հարցերն ընդհանուր են ամբողջ խմբի համար, պահանջները կամ առարկությունները բնորոշ են խմբի բոլոր անդամներին և կողմերի ներկայացուցիչներն ունակ են արդարացիորեն և համարժեքորեն պաշտպանել խմբի շահերը (կանոն 23)[5]: ԱՄՆ-ում խմբային հայցերի ինստիտուտի կիրառության ոլորտները բավական լայն են (տրանսպորտային միջոցների (օդանավեր, գնացքներ և այլն) վթարներ, կողմնակի ազդեցություն ունեցող դեղորայքի վաճառք, շրջակա միջավայրի աղտոտում, շինարարության ոլորտում վնասակար նյութերի օգտագործում և այլն): Հարկ է նկատել, որ ԱՄՆ-ում խմբային հայցի կիրառությունը շարունակում է մնալ քաղաքացիական դատավարության առավել խնդրահարույց հարցերից մեկը: Սույն ոլորտում օրենսդրությունը հաճախ է ենթարկվում փոփոխությունների: Այսպես, 2005 թվականին ընդունված ակտով (Class Action Fairness Act) սահմանափակվեց խմբային հայցերի կիրառության հնարավորությունը[6]: Դրանով դաշնային դատարաններին վերապահվեց վեճեր քննելու իրավասություն այն խմբային հայցերով, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն ԱՄՆ դոլարը, իսկ խմբի անդամների նվազագույն թիվը 100 է[7]: Խմբային հայցի ամերիկյան ինստիտուտի զարգացումը վկայում է նշված գործերով դատական քննության բոլոր ասպեկտների առավել խիստ իրավական կանոնակարգման մասին՝ ի համեմատ 1938 թվականի Քաղաքացիական դատավարության կանոններով սահմանված «ազատական» մոդելի[8]:

Մասնավոր խմբային հայցի ինստիտուտը բավական լայն տարածում է ստացել նաև անգլոսաքսոնական իրավական համակարգի այլ պետություններում (Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա և այլն):

Մայրցամաքային իրավունքի պետություններում մասնավոր խմբային հայցի ինստիտուտը ներդրվեց 20-րդ դարի վերջերին (օրինակ՝ Նիդեռլանդներում՝ 1994 թվականին, Պորտուգալիայում՝ 1995 թվականին): Եվրոպական որոշ պետություններում սույն ինստիտուտը օրենսդրական ամրագրում ստացավ ավելի ուշ (օրինակ՝ Իսպանիայում՝ 2001 թվականին, Շվեդիայում՝ 2002 թվականին): Շվեդիայում «Խմբային հայցերի մասին» օրենքի (Groupe Proceedings Act)[9] ընդունմամբ, իրավական ամրագրում ստացան ինչպես մայրցամաքային, այնպես էլ ընդհանուր իրավունքի պետություններին հայտնի անձանց խմբի կամ անձանց անորոշ շրջանակի իրավունքների պաշտպանության գրեթե բոլոր եղանակները: Կոլեկտիվ վեճերի լուծման շվեդական մոդելն ընդօրինակեցին նաև սկանդինավյան մյուս պետությունները՝ Ֆինլանդիան, Նորվեգիան և Դանիան[10]: Վերոնշյալ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ խմբային հայցը հայցվորը դատարան է ներկայացնում մի քանի անձանց անունից, ովքեր տվյալ գործով հանդես չեն գալիս որպես կողմ, սակայն որոնց համար նշված հայցն առաջ է բերում իրավական հետևանքներ: Մասնավոր խմբային հայցը կարող է ներկայացվել քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից, որոնց համար ամբողջությամբ ընդունելի են հայցի առարկան և հիմքը (հոդ. 4): Կազմակերպական խմբային հայց կարող է ներկայացվել արտաբյուջետա-

յին հասարակական կազմակերպության կողմից՝ ի պաշտպանություն սպառողների շահերի կամ շրջակա միջավայրի (հոդ. 5): Վերջապես, հանրային խմբային հայց ներկայացվում է Շվեդիայի կառավարության կողմից որոշված իշխանության մարմնի կողմից (հոդ. 6):

Հարկ է նկատել, որ մայրցամաքային իրավունքի մի շարք պետություններում մասնավոր խմբային հայցերի ինստիտուտի հանդեպ վերաբերմունքը միանշանակ չէ: Օրինակ՝ Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիան ձեռնպահ են մնացել մասնավոր խմբային հայցերի անգլոսաքսոնական ինստիտուտի ընդօրինակումից: Վերջինիս յուրօրինակ այլընտրանք են դարձել հանրային և կազմակերպական խմբային հայցերը: Ընդ որում, մայրցամաքային խմբային հայցերը վերաբերելի են հասարակական հարաբերությունների ոչ բոլոր, այլ՝ որոշակի ոլորտներին: Դրանցից են, օրինակ, արժեթղթերի և սպառողական շուկաները, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն: Այս կապակցությամբ, Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունվել են մի շարք հանձնարարականներ՝ Եվրոպական միությունում անձանց մեծաթիվ խմբերի իրավունքների պաշտպանության դատավարական կառուցակարգերի կիրառության հարցերով: Դրանցից է, օրինակ, Եվրոպական միության հակամենաշնորհային օրենսդրության պահանջների խախտման դեպքերում վնասի հատուցման հայցերի կիրառության վերաբերյալ հանձնարարականը (White Paper on damages actions for breach of the EC antitrust rules[11]), որով առաջարկվում է օգտագործել անձանց մեծաթիվ խմբերի իրավունքների պաշտպանության երկու եղանակներ՝ լիազորված անձանց՝ սպառողների և առևտրային կազմակերպությունների միությունների կողմից ներկայացվող ներկայացուցչական հայցեր՝ ի պաշտպանություն ինչպես որոշակի, այնպես էլ անորոշ շրջանակի տուժած անձանց իրավունքների և տուժած անձանց մեծաթիվ խմբի մասնակիցների կողմից ներկայացվող խմբային հայցեր՝ ի պաշտպանություն իրենց, ինչպես նաև խմբի մյուս մասնակիցների շահերի, ովքեր տվել են իրենց համաձայնությունը որպես մասնակից միանալու խմբային հայցով դատական քննությանը[12]: Դրա հետ մեկտեղ, նշված իրավական կառուցակարգերից և ոչ մեկը չպետք է խոչընդոտի մեծաթիվ խմբի մասնակիցների անհատական հայցով դատարան դիմելու իրավունքի իրացմանը:

Հարկ է նկատել, որ Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկված ներկայացուցչական հայցի ներկայացման կառուցակարգի հետ կապված, գոյություն ունեն երկու հնարավոր սկզբունքներ՝ ընտրություն՝ հոգուտ խմբի կազմից դուրս գալու (opt-out) և ընտրություն՝ հոգուտ խմբին միանալու(opt-in): Առաջին սկզբունքով առաջնորդվելու դեպքում, խմբային հայցով գործի քննությունը ենթադրում է, որ մեծաթիվ խմբի պոտենցիալ մասնակիցներին տրամադրվում է որոշակի ժամանակ՝ խմբի կազմից դուրս գալու վերաբերյալ հայտարարություն անելու համար: Հակառակ դեպքում, գործով ընդունվող որոշումը կտարածվի նրանց վրա՝ անկախ իրենց ցանկությունից: Երկրորդ սկզբունքով առաջնորդվելու դեպքում խմբի գործով որոշումը տարածվում է խմբի միայն այն մասնակիցների վրա, ովքեր ժամանակին ծանուցում են դատարանին խմբային հայցով ներկայացվող պահանջներին իրենց միանալու մասին: «Opt-in» մոդելը կիրառվում է Եվրոպական միության անդամ այն պետություններում, որտեղ օրենսդրորեն նախատեսված է կոլեկտիվ փոխհատուցման հնարավորությունը: «Opt-out» մոդելը կիրառվում է Պորտուգալիայում, Բուլղարիայում, Նիդեռլանդներում և Դանիայում[13]:

Եվրոպական հանձնաժողովի մեկ այլ հանձնարարականով, որը վերաբերում է սպառողներին խմբային փոխհատուցում տալուն (Green Paper on Consumer Collective Redress[14]), սահմանված են Եվրոպական միության տարբեր պետություններում սպառողների իրավունքների պաշտպանության հնարավոր եղանակները: Այս առումով, Եվրոպայում խմբային հայցերի կիրառության նպատակը սպառողների իրավունքների պաշտպանության առավել բարձր մակարդակի ապահովումն է՝ եվրոպական տարբեր պետությունների միջև ապրանքաշրջանառության ծավալների ավելացման նպատակով:

Եվրոպական միությունում ընդունվել է Սպառողների շահերի պաշտպանության մասին դիրեկտիվը, որով ևս խմբային հայցերի ներկայացման իրավունք է վերապահված

սպառողների միություններին[15]:

Սպառողների իրավունքների պաշտպանության ուղղված խմբային հայցեր ներկայացնելու հնարավորություն է նախատեսված Ֆրանսիայի օրենսդրությամբ: Այստեղ տարբեր միություններ օժտված են հանրային և խմբային շահերի պաշտպանությանն ուղղված հայցեր ներկայացնելու իրավունքով՝ նշված միությունների մեջ մտնող կազմակերպությունների գործունեության կապակցությամբ[16]: Գերմանիայում, «Ընդդեմ անբարեխիղճ մրցակցության» օրենքին[17] համապատասխան, սպառողների միություններն իրավունք ունեն խմբային հայց ներկայացնել՝ որպես անբարեխիղճ մրցակցություն որակվող գործողությունների հետևանքով սպառողներին պատճառված վնասի հատուցման պահանջով: Սպառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները կամ դրանց միությունները խմբային հայցերի ներկայացման իրավունքով են օժտված նաև Իտալիայում[18], Բելգիայում, Նիդեռլանդներում[19], Պորտուգալիայում[20] և եվրոպական այլ պետություններում:

Առավել հանգամանալից անդրադառնանք խմբային հայցերի ինստիտուտին վարչական արդարադատության ոլորտում ինչպես ընդհանուր, այնպես էլ մայրցամաքային իրավունքի մի շարք պետություններում: Ամերիկայի Միացյալ Նահանգներում պետության հետ վեճերում խմբային հայցերի կիրառության համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ վարչական արդարադատության ամերիկյան համակարգի առանձնահատկություններին: Այստեղ էական դերակատարություն ունեն գործադիր իշխանությանը դասվող կվազիդատական բնույթի տարբեր ստորաբաժանումները, և վեճերը կարող են լուծվել առանց դատարան դիմելու: Դրա հետ մեկտեղ, օրենսդրորեն նախատեսված է պետության գործողությունները դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Դաշնային դատարաններն օժտված են առաջնային իրավասությամբ բոլոր այն հայցերով, որոնք ուղղված են պետական ծառայողներին կամ գերատեսչություններին հայցվորի հանդեպ ստանձնած պարտականությունների կատարմանը հարկադրելուն[21]: Նկատենք, որ ԱՄՆ-ում տևական ժամանակ պետական որևէ գերատեսչության դեմ հայցի ներկայացումը բավական բարդ էր, քանզի դաշնային կառավարությունը՝ լայն առումով, օժտված է ինքնիշխան իմունիտետով[22]: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ համընդհանուր ճանաչում ստացած դիրքորոշման համաձայն՝ ընդդեմ Միացյալ Նահանգների դատական որևէ գործընթաց չի կարող սկսվել և ընթանալ[23]: Վերոնշյալ իմունիտետն առ այսօր տեղ-տեղ հանդես է գալիս որպես «բացարձակ խոչընդոտ՝ ընդդեմ դաշնային կառավարության հայցեր ներկայացնելու ճանապարհին»[24]: Այդուհանդերձ, ԱՄՆ-ում ներկայումս գործում են մի քանի օրենսդրական ակտեր, որոնք թույլ են տալիս հաղթահարել այն: Դրանցից են, մասնավորապես, «Վարչական ընթացակարգի մասին» օրենքը (The Administrative Procedure Act), Թաքերի օրենքը (The Tucker Act) և «Դաշնային մակարդակում դելիկտային հայցերի մասին» օրենքը (Federal Tort Claims Act): Հատկանշական է, որ վերը հիշատակված օրենքներից առաջինը նախատեսում է միայն այնպիսի հայցեր ներկայացնելու հնարավորություն, որոնք չեն վերաբերում նյութական վնասի հատուցմանը՝ բովանդակելով մի շարք այլ վերապահումներ: Ուստի՝ մանրամասն անդրադառնանք «Դաշնային մակարդակում դելիկտային հայցերի մասին» 1948 թվականի օրենքի դրույթներին, որոնցով նախատեսված է Միացյալ Նահանգներին պատասխանատվության ենթարկելու հնարավորություն սեփականության փչացման կամ կորստի, ֆիզիկական վնասի կամ մահվան համար՝ պայմանավորված պաշտոնատար անձի անփույթ կամ ապօրինի գործողությամբ (անգործությամբ)՝ իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս[25]: Սույն օրենքով նախատեսված են պետությանը պատասխանատվությունից ազատելու երեք հիմքեր՝ պայմանավորված այնպիսի իրադարձություններով, որոնք հնարավոր չէ կանխել (այսպես կոչված “Feres Doctrine”): Դրանք են զինծառայողների կողմից՝ զինվորական պարտականությունների կատարմամբ պայմանավորված վիրավորում ստանալու, հայեցողական լիազորությունների իրականացման դեպքերը, ինչպես նաև միջազգային բնույթի դելիկտները (օրենքի գործողության հետ կապված լրացուցիչ սահմանափակումները վերաբերում են այնպիսի ոլորտների,

ինչպիսիք են, օրինակ, դրամական համակարգի կարգավորումը, փոստային ծառայությունների մատուցումը և այլն)[26]: Նախ՝ պահանջների ներկայացման համար ելակետային դարձած պատահարից հետո, երկու տարվա ընթացքում անձը պարտավոր է կապ հաստատել համապատասխան գերատեսչության հետ՝ վերջինիս ներկայացնելով իր պահանջները: Եթե դրան հաջորդող վեցամսյա ժամկետում գերատեսչությունը նրան տեղեկացնի իր պահանջների մերժման մասին, ապա վերջինս նույն ժամկետում պետք է դիմի դատարան[27]:

Այսպիսով, ԱՄՆ օրենսդիրը «կանաչ լույս է վառել» ինչպես խմբային, այնպես էլ անհատական հայցերի առջև, սակայն խստագույնս կանխորոշված ծավալներով, որոնք կոնկրետացված են առանձին օրենսդրական ակտերով: Այս կապակցությամբ, չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ արդյունավետ խմբային կամ անհատական հայցի ներկայացումը գործնականում հնարավոր չի լինի: Օրինակ՝ նման իրավիճակ առաջացավ 2005 թվականին Նոր Օռլեանում՝ կապված «Քաթրինա» փոթորիկից տուժած անձանց կողմից ներկայացված հայցի հետ: Տվյալ դեպքում որպես պատասխանողներ պետք է հանդես գային ԱՄՆ ինժեներային զորքերը, որոնք ի զորու չեղան պաշտպանել քաղաքը տարերային աղետից: Դատավորը չընդունեց հայցը՝ գտնելով, որ զինվորական ինժեներներն օժտված են հայցերի հանդեպ իմունիտետով («Զրահեղեղների նկատմամբ վերահսկողության մասին» 1928 թվականի օրենքը նրանց, իրոք, օժտել էր իմունիտետով) և ինքը «սահմանափակված է օրենքի կաղապարներով», թեև ուսադիրներով անձինք, իրոք, «աչք են փակել» քաղաքի պաշտպանության հարցի վրա[28]:

Ավստրալիայում խմբային հայցերի ինստիտուտը (պաշտոնական անվանումն է՝ “representative proceedings”) օրենսդրական ամրագրում ստացավ 1990-ական թվականների սկզբին: Ընդ որում, այս կապակցությամբ բոլոր անկյունաքարային դրույթներն արտացոլված են «Դաշնային դատարանակազմության մասին» օրենքով (Federal Court of Australia Act 1976, IVA): Վերոնշյալ ինստիտուտն օրենսդրական մակարդակում ամրագրելու տրամաբանության հիմքում ընկած էին երկու հիմնական նպատակներ: Դրանցից առաջինը դատական պաշտպանության իրական միջոց նախատեսելու անհրաժեշտությունն էր այն դեպքերում, երբ թեև շոշափվում են բազմաթիվ անձանց շահերը, և վիճելի հարցի գինը բարձր է, այդուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրին պատճառված վնասն էական չէ և այն հատուցելը անհատական հայց ներկայացնելու միջոցով նպատակահարմար չէ: Այսինքն՝ նման քայլով նախատեսվեց արդարադատության մատչելիություն հասարակության այն անդամների համար, որոնց ավելի վաղ նման հնարավորություն փաստացի չէր ընձեռնվել հայցերի «թանկության» պատճառով: Վերը նշված օրենքի ընդունման երկրորդ նպատակն այնպիսի իրավիճակների կանոնակարգումն էր, երբ պատճառված վնասի համար յուրաքանչյուր հայցվորի կողմից պահանջվող նյութական հատուցման չափը բավական մեծ է, և, միաժամանակ, առկա են պատասխանողից հատուցում պահանջող բազմաթիվ հայցվորներ: Օրենքի ընդունմամբ անձանց խմբերի համար նախատեսվեց փոխհատուցում ստանալու ավելի մատչելի և արդյունավետ հնարավորություն[29]: Ավստրալիայում գործող իրավակարգավորումներին համապատասխան՝ խմբային հայցերով դատական քննություն սկսելու համար անհրաժեշտ է պահպանել օրենսդրական մի շարք պահանջներ: Դրանք են՝ ընդդեմ միևնույն անձի պահանջներ ներկայացնող յոթ կամ ավելի անձանց առկայությունը, բոլոր պահանջների բխելը նույնատիպ կամ միմյանց հետ կապված հանգամանքներից, բոլոր պահանջներից իրավական բնույթի էական և ընդհանուր առարկությունների և վիճելի հարցերի ծնունդ առնելը[30]: Հայցադիմումում պետք է նշվեն խմբի անդամների մասին տեղեկություններ, կոնկրետացվեն խմբի անունից ներկայացվող պահանջները, ինչպես նաև խմբի անդամների համար ընդհանուր իրավունքի հարցերը և փաստական հիմքերը: Օրենքը հնարավորություն է ընձեռում դատական գործընթացը նախաձեռնած հայցվորին հաշտության համաձայնության գալ պատասխանողի հետ, սակայն այդպիսի համաձայնության բովանդակությունը և պայմանները պարտադիր կարգով պետք է ներկայացվեն դատարանին: Ավելին, գործի քննության ցանկացած փու-

լում հայցվորը կարող է նաև բացառապես անհատական կարգով հատուցում ստանալ: Նշված դեպքում նրան կարող է փոխարինել խմբի այլ անդամ՝ համապատասխան դիմում ներկայացնելով դատարան[31]:

Խնդրո առարկայի հետ կապված, հետաքրքրական են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումները: ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի[32] 42-րդ հոդվածով ամրագրված է անձանց խմբի կողմից վարչական խմբային հայցադիմումով դատարան դիմելու հնարավորությունը: Ըստ այդմ, վարչական կամ հանրային այլ հարաբերությունների մասնակից հանդիսացող քաղաքացիները, ինչպես նաև այլ անձինք՝ օրենքով նախատեսված դեպքերում, իրավունք ունեն անձանց խմբի խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված խմբային հայցադիմում ներկայացնել դատարան: Ընդ որում, դատարան դիմելու համար հիմք է հանդիսանում այնպիսի պայմանների առկայությունը, ինչպիսիք են անձանց խմբի մեծաթիվությունը կամ խմբի անդամների թվի անորոշ լինելը, ինչը բարդացնում է խմբի պոտենցիալ անդամների պահանջներին լուծում տալու գործընթացն անհատական կարգով և մի քանի հայցվորների կողմից վարչական հայցադիմումի համատեղ ներկայացման կարգով, վեճի առարկայի և խմբի անդամների կողմից համապատասխան պահանջների ներկայացման հիմքերի նույնաբնույթ լինելը, վարչական գործով ընդհանուր պատասխանողի (համապատասխանողների) առկայությունը, ինչպես նաև խմբի բոլոր անդամների կողմից իրենց իրավունքների պաշտպանության միևնույն եղանակի օգտագործումը: Հատկանշական է, որ նման վարչական գործերը դատարանի կողմից քննության են առնվում այն դեպքում, եթե անձանց խմբի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ պահանջ ներկայացրած անձի կողմից դատարան դիմելու օրվա դրությամբ նշված պահանջին են միացել ոչ պակաս, քան քսան անձինք: Դա տեղի է ունենում վարչական հայցադիմումը ստորագրելու կամ հայցադիմումին միանալու մասին առանձին գրավոր հայտարարություն ներկայացնելու եղանակով: Խմբային հայցադիմումում պետք է նշվեն այն անձը կամ անձինք, ում հանձնարարված է համապատասխան վարչական գործի վարումը՝ ելնելով անձանց խմբի շահերից: Ընդ որում, նշված անձը կամ անձինք գործում են առանց լիազորագրի, օգտվում են հայցվորների իրավունքներից և կրում նրանց դատավարական պարտականությունները: Դատարանի վարույթում գտնվող վարչական խմբային հայցադիմումում նշված պահանջին համահունչ պահանջ բովանդակող հայցադիմումով ևս մեկ անձի՝ դատարան դիմելու դեպքում, դատարանն առաջարկում է նրան միանալ խմբային հայցադիմումին: Եթե նշված անձը միանում է անձանց խմբի կողմից ներկայացված պահանջին, ապա դատարանը միավորում է ներկայացված և ավելի վաղ ընդունված պահանջները: Հակառակ դեպքում, դատարանը կասեցնում է նրա հայցադիմումով գործի քննությունը՝ մինչև անձանց խմբի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ վարչական գործով որոշում կայացնելը:

Ֆրանսիայում, խմբային հայցը՝ որպես կոլեկտիվ շահերի պաշտպանության դատավարական միջոց, իրավակիրառ պրակտիկայում գոյություն է ունեցել դեռևս 20-րդ դարի սկզբներին: 1913թ. Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի կողմից քննված գործերից մեկով որպես հայցվոր էր հանդես գալիս գյուղատնտեսական արտադրանքի արտադրողների մի կոլեկտիվ, որոնք միավորվել և հայց էին ներկայացրել իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով:

1973թ. դեկտեմբերի 27-ին ընդունվեց օրենք, որով նախատեսվեց կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայց ներկայացնելու հնարավորություն և սահմանվեցին այն հիմքերը, որոնց պարագայում հնարավոր էր խմբային հայց ներկայացնել:

Ֆրանսիայի դատավարական օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ կոլեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված հայցը կարող է ներկայացվել օրենքով ուղղակիորեն նախատեսված հետևյալ դեպքերում՝

1. Կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայցը կարող է ներկայացվել սպառողների միավորումների կողմից: Ինչպես նշեցինք, հիշյալ հայցի օրենսդրական կարգավորումը սկիզբ է առնում 1973թ. ընդունված

օրենքից: Հետագայում՝ 1993թ. օրենքը կոդիֆիկացվեց սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված առանձին օրենսգրքում, որն ամրագրեց այն կազմակերպությունների իրավական վիճակը, որոնք օժտված են կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայց ներկայացնելու հնարավորությամբ:

Սպառողների օրենսգրքի հոդված L. 421-7-ի համաձայն՝ կոլեկտիվ շահերի պաշտպանության նպատակով հայց ներկայացնելու համար անհրաժեշտ նախապայմաններն են՝ 1) վնասը պետք է պատճառված լինի քրեորեն պատժելի արարքով, 2) այն պետք է ներկայացվի հակահիրավական արարքի դադարեցման նպատակով, 3) այն ներկայացվում է պայմանագրի այն պայմանները բացառելու նպատակով, որոնք խախտում են սպառողների իրավունքները: Կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայցի միջոցով դատական պաշտպանության իրավունքի առաջացման համար բավարար է հիշյալ պայմաններից մեկի առկայությունը:

2. Կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայց կարող է ներկայացվել բնակչության առողջության պաշտպանության միավորումների կողմից: Բնակչության առողջության մասին օրենսգրքի հոդված L.1114-2-ի համաձայն՝ բնակչության առողջության պաշտպանության ասոցիացիաները կարող են կոլեկտիվ շահերի պաշտպանության հայց ներկայացնել առողջապահության համակարգի կազմակերպությունների ծառայությունների կողմից սպառողների կոլեկտիվ շահերի ուղղակի կամ անուղղակի խախտումների դեպքում:

3. Ֆրանսիայի «Շրջակա միջավայրի պաշտպանության մասին» օրենսգիրքը կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայց ներկայացնելու հնարավորություն է նախատեսում շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենսդրությամբ նախատեսված կոլեկտիվ իրավունքների ուղղակի կամ անուղղակի խախտումների համար:

Ֆրանսիայի օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ խմբային հայցերի միջոցով դատական պաշտպանության իրավունքի իրացումը հնարավոր է հիշյալ կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար[33]:

Խոսելով Գերմանիայում խմբային հայցերին առնչվող իրավակարգավորումների մասին, հարկ է նկատի ունենալ, որ չնայած բազմաթիվ առաջարկություններին՝ վերջինս նույնությամբ չի փոխառել խմբային հայցերի անգլոսաքսոնական ինստիտուտը՝ ամրագրելով հիշյալ հայցերի յուրօրինակ այլընտրանքային տարբերակ՝ կազմակերպությունների խմբային հայցերը:

Հարկ է նկատել, որ կազմակերպությունների խմբային հայցերի միջոցով դատական պաշտպանության հնարավորություն նախատեսող առաջին ակտը Գերմանիայում ընդունվել է դեռևս 100 տարի առաջ:

Գերմանացի իրավագետները, ընդունելով, որ ամերիկյան խմբային հայցի ինստիտուտը հետաքրքիր իրավական գործիք է, միևնույն ժամանակ կասկածանքով են վերաբերվում այն գերմանական իրավական համակարգ ներմուծելու գաղափարին[34]:

Գերմանիայում ընդունվել են մի քանի նորմատիվ ակտեր, որոնք հնարավորություն են տալիս տարատեսակ միավորումներին և կազմակերպություններին ներկայացնելու խմբային հայցեր: Մասնավորապես, անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի մասին օրենքի փոփոխությունները սպառողների միավորումներին հնարավորություն տվեցին խմբային հայցեր ներկայացնել անբարեխիղճ մրցակցություն որակվող գործողությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման առնչությամբ[35]:

2002թ. «Շրջակա միջավայրի պաշտպանության մասին» դաշնային օրենքով նախատեսվեց շրջակա միջավայրի պաշտպանության կազմակերպությունների կողմից հայց ներկայացնելու միջոցով հիշյալ բնագավառի օրենսդրությամբ ամրագրված պայմանների ու պահանջների պահպանմանը հարկադրելու հնարավորություն: Հիշյալ միավորումների կողմից հայց ներկայացնելու իրավունքը սահմանափակվում է դատական արգելքի վերաբերյալ դատական որոշում ընդունելու պահանջով և հնարավորություն չի տալիս դատական կարգով քննարկելու առանձին անձանց պատճառված անհատական վնասի հատուցման հարցը[36]:

1. Տե՛ս Clermont K. M. Principles of Civil Procedure. St. Paul, 2005, էջ 386:

2. Տե՛ս Елисеев Н. Г. Гражданское процессуальное право зарубежных стран, М., 2006, էջ 495:

3. Տե՛ս Пучинский В. К. Гражданский процесс зарубежных стран, М., 2007, էջ153:

4. Տե՛ս Оскаве К. Классовый иск в современном американском гражданском процессе // Защита прав и законных интересов граждан и организаций: материалы Международной научно-практической конференции. Сочи, Ч. 1, 2002, N 3, էջեր 69-81:

5. Տե՛ս Federal Civil Judicial Procedure and Rules, 2004 Revised Edition. St. Paul, 2004, էջեր 121-122:

6. Տե՛ս Resnik J. Whither and Whether Adjudication? // Boston University Law Review, 2006, N 86, էջ 1125:

7. Տե՛ս Spencer B. A. Civil Procedure. A Contemporary Approach. St. Paul, 2007, էջ 565:

8. Տե՛ս Subrin S. N., Minow M. L., Brodin M. S., Main T. O. Civil Procedure: Doctrine, Practice and Context. New York, 2008, էջ 928:

9. Հայրկանշական է, որ վերոնշյալ օրենքի մշակման գործընթացը չափազանց երկարատև էր՝ ավելի քան 10 տարի: Օրենքն ուժի մեջ է 2003 թվականի հունվարի 1-ից:

10. Տե՛ս Hodges C. Europeanisation of Civil Justice: Trends and Issues // Civil Justice Quarterly, 2007, Vol. 26. January, էջ 118:

11. COM (2008) 165 final of 2 April 2008:

12. Մանրամասն տե՛ս ec.europa.eu/.../antitrust/actionsdamages/white_...

13. Մանրամասն տե՛ս "Towards a European Horizontal Framework for Collective Redress", COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS, Brussels, XXX COM(2013) 401/2, 3.2-3.4, ec.europa.eu/justice/.../com_2013_401_en.pdf:

14. Brussels, 27 November 2008, COM (2008) 794 final:

15. Տե՛ս Directive 2009/22/EC of the European Parliament and of the Council of 23 April 2009 on injunctions for the protection of consumers' interests: Այս կապակցությամբ, տե՛ս նաև DIRECTIVE OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL on certain rules governing actions for damages under national law for infringements of the competition law provisions of the Member States and of the European Union, Brussels, 24 October 2014, adopted by the Council on 10 November 2014:

16. Տե՛ս Jolowicz J. A. On Civil Procedure, 2000, էջ 77:

17. Տե՛ս Gesetz gegen den unlauteren Wettbewerb (UWG, 2004).

18. Տե՛ս http:/www.italia-ru.it/node/9310:

19. Տե՛ս Hodges C. Multy-Party Actions: A Europian Approach, էջ 323:

20. Տե՛ս Hodges C. Europeanisation of Civil Justice: Trends and Issues // Civil Justice Quarterly, 2007, Vol. 26. January, էջ 115:

21. Տե՛ս 28 USC. « 1361. Action to compel an officer of the United States to perform his duty, http://www.law.cornell.edu/uscode/28/1361.html:

22. Մանրամասն տե՛ս G. C. Sisk, M. F. Noone, J. Montague Steadman, U. A. Lester. Litigation with the federal government, էջեր 333-334:

23. Տե՛ս E. Chemerinsky. Against Sovereign Immunity// Stanford Law Review, Vol. 53, No. 5, May, 2001, էջ 1204:

24. Տե՛ս A. Hill. In Defense of Our Law of Sovereign Immunity// Boston College Law Review, Vol. 42, Issue 3, No. 3, էջ 488:

25. Տե՛ս Օրենքի § 1346. United States as defendant, http://www.law.cornell.edu/uscode/uscode28/usc_sec_28_00001346----000-.html:

26. Տե՛ս Federal Tort Claims Act// CRS Report for Congress, December 11, 2007, էջ 2, http://www.fas.org/sgp/crs/misc/95-717.pdf:

27. Տե՛ս նույն տեղում:

28. Տե՛ս E. Blass. Katrina flooding lawsuit dismissed// USA Today 1/30/2008, http://www.usatoday.com/news/nation/2008-01-30-katrina-lawsuit_N.htm:

29. Տե՛ս Dr Vince Morabito. Corporate Accountability, Third Parties and Class Actions, Working Paper No. 3, 2006, էջ3, http://www.buseco.monash.edu.au/blt/wclrg/working-paper-3.pdf:

30. Տե՛ս Federal Court of Australia Act 1976, sec. 33C, http:// www.austlii.edu.au/au/legis/cth/consol_act/fcoaa1976249/s33c.html:

31. Տե՛ս նույն տեղում, sec. 33H, 33V, 33W:

32. Տե՛ս "Кодекс административного судопроизводства Российской Федерации" от 08.03.2015 N 21-ФЗ: «Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 08.03.2015թ. N22-ФЗ ՌԴ դաշնային օրենքին համապատասխան՝ օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 2015 թվականի սեպտեմբերի 15-ից:

33. Черкасова Евгения Борисовна, ИСК В ЗАЩИТУ КОЛЛЕКТИВНЫХ ИНТЕРЕСОВ И ПРЕДСТАВИТЕЛЬСКИЙ ИСК ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ ФРАНЦИИ, conf.sfu-kras.ru/mn2015/sites/.../files/.../черкас.do

34. Цвайгерт К., Кётц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права: в 2 т. Т. 1 / пер. с нем. М., 2000. С. 32.

35. Дмитрий Ярославович Малешин, Российская модель группового иска, http://www.szrf.ru/doc.phtml?nb=edition07&issid=2010004000&docid=20:

36. Аболонин Г. Массовые иски, М.,2011, էջ 257-259: